

ՏԵՍԻՒ, ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎՊՈՅ

Հետուն դարերու անհրապոյր արջամուղջին մէջ կը պլպլայ լոյս մը լացող մանկան թիբերուն պէս բացխլիփիկ. մարող աստղի մը երեւոյթն ունի. կոյտի մը շուրջ ստուերով վարագուրուած՝ ուրուականներ կը յաճին, մեղամաղձ երգ մը կը բարձրանայ բոլոր տարրերէն և խունկի նրբութեամբ կ'անհետի եթերին մէջ:

Հեազհետէ առեղծուածային զանգուածը կը պարզուի, քողը կը թերաստուերի: Լերան կողին կանգնած է տանձր մը, հայուն զարաւոր կրօնքի սեղանն է ան հնութեան չափ գեղեցիկ, իր ոտքերուն առջև կը գալարի ծոփն, արտասուքի աւազանը, ու երկնաւոր տանձարին մէջ ալեոր մարգարէ մը ամպապսակ ճակատով ու կրակէ շուրթներով երկիր կը համբուրէ: հոն է յղացման տաղաւարը, պատգամի առաքատը, որ ազգի մը ծնունդ պիտի տայ: հոն գմբեթէն միսթիք ձայնի արձագանգը ապագան կ'աւետէ մերթ ծիրանեծին արշալոյսով շրեղուած ու մերթ հմայիչ վերջալոյսի գեղով առինքնող, բայց աւագ, սե ծիրերով եզրուած է իր փառքի պասկը:

Հանդիպակաց լերան ծերպերէն անմահութեան շառայլ մը կը նշուլէ հայրապետին, կը կարկատէ հայրենիքի հրեշտակը ժմիտէ վարդեր, լեռներէն բարձր, ծովէն ընդարձակ՝ երանութեան սփինքս՝ կիսաստուածի յուսութիւնը ունի: Հրեշտակի ժպիտով ծովուն բիւրեղեայ հայելին կը բեկբեկի, ձեծուող ալիքներու խտովքը կը մեռնի ըղձաւանջ ուխտաւորներու ոտքին, ծովը կ'արիւնի ուրախութեան արբումով ու միապաղաղ ափնածիր հորիզոնը կ'երգունուի նոր ծագող արեւի նշոյլով, անմահներու խումը մը արծուի թևերով կը յառաջէ:

Աւխտական ամբոխը յաւերժական շիրմին համբոյրներ կը դրոշմէ որ խանձարուրք մ'է յառաջդիմութեան, բայց ինչ որ գեղեցիկ է չերջանկանար: հայը պէտք է իր գոյութիւնը մարտիրոսէ կրօնքին, անպատի անհնութեան մէջ ընդ առաջ երթայ կիզանուտ շեղջերու երաշտութեան խոնջանքէն բեռնաւորուած: Բայց հոն ինչպէս երբեմն խարայելին աստուածատես մարգարէներ, օրէնքի հեղինակներ կը յառնեն, ուր հացը երկնքէն կ'իջնէ և զովարար ջուրը ապառաժի կողէն, և հայը երջանկութիւն կը վայլէ իր կոշկոճման մէջ առաջնորդուած հայ մարգարէներէ:

Ահա թարգմանիչ հայրապետներու անբոնաբարելի արժանիքը կրօնքին չափ տեղոյ, փառքին պէս անմահ. ահա հայրենիքի և կրօնքի սրբական հուրը զոր Հայը իր հետ կը շրջեցնէ ամենէն հեռաւոր հորիզոններուն մէջ, մանաւանդ իտալիոյ հոգեգրաւ կապոյտին տակ ու գեղեցիկ պիտութեան մէջ կը բերէ հայն իր հանձարը անմահութեան թագն ընգունելու: